



Երազիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից



Save the Children

oxyGen

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

#EU4Youth

#UP4Change




Սույն տեղեկատվական գրքույկը իր մեջ զետեղում է «Հնարավորություններ երիտասարդներին» տոնավաճառին մասնակցություն ունեցած մի շարք կազմակերպությունների կողմից երիտասարդներին առաջարկվող հնարավորությունները:

Տոնավաճառը կազմակերպվել է «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար» տարածաշրջանային ծրագրի (2018-2020թթ.) շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ հետևյալ երեք երկրներում՝ Հայաստան, Վրաստան և Ուկրաինա: Հայաստանում այն իրականացվում է «Մեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից՝ «ՕքսԵՋեն» երիտասարդների և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի հետ համագործակցությամբ:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ և այն պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:


Գրքույկում զետեղված տեղեկատվությունը տրամադրել են տոնավաճառին մասնակից կազմակերպությունները: «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը և «ՕքսԵՋեն» հիմնադրամը պատասխանատվություն չեն կրում ներկայացված բովանդակության և առաջարկվող հնարավորությունների համար:

Գրքույկը շարունակաբար թարմացվելու է, և բոլոր այն կառույցները, ովքեր իրականացնում են երիտասարդներին ուղղված ծրագրեր և ցանկություն ունեն տեղեկատվություն զետեղել այս գրքույկում, կարող են դիմել [«Մեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ»](#) կազմակերպության հայաստանյան ներկայացուցչություն կամ [«ՕքսԵՋեն»](#) երիտասարդների և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ.....	6
ԱՐՄԱԹ ԻՆՏԵՆՆԵՐԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ.....	7
«Բի Էս Սի» ԲԻԶՆԵՍԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ	8
ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ	9
«ԴԱՍԱՎԱՆԴՐ, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	10
«ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ	11
ԱՄՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ	12
«ԿԱԶԱ» ՇՎԵՑՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	13
«ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ».....	14
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ.....	15
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ (COAF).....	16
ՀԱՅԱՍՏԱՆԻՄ ԷՐԱԶՄՈՒՄ+ ԾՐԱԳՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՑԱԿ.....	17
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ.....	18
Y-PEER Հայաստան	19
«ՅՈՒՆԻԳՐՈՈՒՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ».....	20
UCOM	21
«ՈՒՆԻՍՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ.....	22
ՄԻՆԵՐՋԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՄԻՍԹԵՄԶ.....	23
staff.am	24
ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ.....	25
818 ՔՈՆՍԱԼԹԻՆԳ.....	26



«ԵՄ-Ն ՀԱՆՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ՝ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ» ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից



Save the Children

oxYGen

Ծրագրի մասին

«ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար» տարածաշրջանային ծրագիրը (2018-2020 թթ.) իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ հետևյալ երեք երկրներում՝ Հայաստան, Վրաստան և Ուկրաինա: Ծրագիրը Հայաստանում իրականացվում է [«Մեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության](#) կողմից՝ [«ՕքսԵՆ» երիտասարդների և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի](#) հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է զարգացնել Արևելյան գործընկերության անդամ երեք երկրների երիտասարդների, այդ թվում՝ խոցելի խմբերի երիտասարդ ներկայացուցիչների ձեռնարկատիրական ներուժը և բարելավել նրանց մրցունակությունն աշխատաշուկայում:

Հնարավորություններ

«ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ»

Ծրագրի այս բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել 3-օրյա դասընթացներ և փորձագիտական հանդիպումներ 100 երիտասարդի համար, որոնք կընտրվեն իրենց ներկայացված դիմումների և հարցազրույցների արդյունքում: Դասընթացների ընթացքում երիտասարդները կստանան տեղեկատվություն ֆինանսա-տնտեսական գրագիտության, բիզնես ծրագրեր գրելու և ֆինանսներ հայթայթելու, ինչպես նաև բիզնեսի կառավարման ու կայունացման վերաբերյալ: Լավագույն բիզնես գաղափարների հեղինակներին տրամադրվելու են փոքր դրամաշնորհներ և խորհրդատվություն՝ ձեռք բերված հմտությունները կիրառելու և բիզնես գաղափարն իրագործելու համար:

«ԱՆՁԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

6-օրյա դասընթացների շարքը ներառում է ժամանակի կառավարման, թիմային աշխատանքի, հաղորդակցման, կազմակերպչական, թվային գրագիտության ու այլ հմտությունների, ինչպես նաև ստեղծագործական մտքի, նախաձեռնողականության ու այլ անձնային որակների զարգացում և ոչ միայն: Դասընթացներն անցկացվելու են 2 փուլով և ընձեռելու են հիանալի առիթ ոլորտի ամենահմուտ մասնագետներից ստանալու գիտելիք և փորձ, ինչը երիտասարդներին ավելի մրցունակ կդարձնի աշխատաշուկայում:

300 վերապատրաստված երիտասարդներից լավագույն 60-ի համար կկազմակերպվի վարձատրվող աշխատանքային պրակտիկա իրենց բնակավայրի մոտակա մասնավոր, պետական կամ հասարակական կառույցներում:

Ծրագրի հնարավորությունների մասին ընթացիկ տեղեկատվությունը պարբերաբար զետեղվում է նաև [«Մեյվ դը չիլդրեն»](#) կազմակերպության և [«ՕքսԵՆ»](#) հիմնադրամի ֆեյսբուքյան էջերում:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆ
ARMENIAN MISSIONARY ASSOCIATION OF AMERICA, ARMENIA

Կազմակերպության մասին

1915թ. Հայոց ցեղասպանությունից հետո ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Ուստր քաղաքում 1918թ. հիմնադրվեց Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցությունը (ԱՀԱԸ)՝ ցեղասպանությունը վերապրած հայրենակիցներին համախմբելու և սատարելու նպատակով: 1991թ. Հայաստանում պաշտոնապես գրանցվելուց հետո ԱՀԱԸ-ն հաստատեց իր մշտական ներկայությունը հայրենի երկրում: Շատ չանցած՝ Հայաստանում և Արցախում ձևավորվեցին ԱՀԱԸ-ի գործունեության հիմնական ուղղությունները:

Հնարավորություններ

Խորեն և Շուշանիկ Ավետիսյանների անվան կրթահամալիր

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի (ԱՀԱԸՀՄ) հոգածության ներքո 1998 թ.-ից գործում է Խորեն և Շուշանիկ Ավետիսյանների անվան [կրթահամալիրը](#), որն այսօր արդեն ունի 447 աշակերտ: Տարածաշրջանի առաջին էկո դպրոցի սաներին տրվում է բարձրակարգ և անվճար կրթություն:

Ցերեկային կենտրոններ

ԱՀԱԸ-ի «Շող» համայնքահեն [ցերեկային կենտրոնները](#), որոնք գործում են Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Շուշիում և Ասկերանում, իրենց բարձր որակավորում ունեցող և փորձառու մանկավարժների, սոցիալական աշխատողների և հոգեբանների միջոցով շուրջ 270 դպրոցահասակ երեխաների տրամադրում են համակողմանի կրթական, սոցիալական, հոգեբանական, անձնային զարգացման, արտ-թերապևտիկ և ժամանցային ծառայություններ:


Կյանքի հմտությունների դպրոց

ԱՀԱԸՀՄ-ի կենտրոնում գործում է «Ապրի՛ք երազանքը» կյանքի հմտությունների Ջինիշյան կենտրոնը, որի նպատակն է նպաստել երիտասարդների ինքնաճանաչմանը, յուրաքանչյուրի կյանքի կոչման բացահայտմանը և սեփական ներուժի իրացմանը:

Ուսման վարձ

ԱՀԱԸՀՄ-ն ԲՈՒՀ-երի գերազանց սովորող կարիքավոր ուսանողներին հնարավորինս օգնում է ուսման վարձի [մասնակի վճարման](#) հարցում:

Կազմակերպության ներսում աշխատանքի հնարավորություններին կարելի է ծանոթանալ՝ հետևելով ԱՀԱԸ-ի [կայքում](#) թափուր աշխատատեղերին վերաբերող հայտարարություններին:



Կազմակերպության մասին

Ամերիկյան խորհուրդները, լինելով միջազգային կրթության, ակադեմիական փոխանակման և օտար լեզուների ուսումնասիրման բնագավառներում առաջատար կազմակերպություն, հնարավորություն է ստեղծում անհատների և հաստատությունների համար՝ հաջողության հասնելու սերտորեն փոխկապակցված աշխարհում: Ամերիկյան խորհուրդների հայաստանյան գրասենյակը հիմնադրվել է 1996 թ-ին: Այս ժամանակահատվածում Ամերիկյան խորհուրդները Հայաստանում իրականացրել է ԱՄՆ-ի կառավարության կողմից հովանավորվող տասնյակ ծրագրեր՝ հնարավորություն տալով ավելի քան 1400 աշակերտների, ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակիցների սովորելու և մասնագիտական վերապատրաստում անցնելու ԱՄՆ-ի ուսումնական հաստատություններում:

Հնարավորություններ

Օրենսդրական ոլորտի մասնագետների ծրագիր /PFP/

Օրենսդրական ոլորտի մասնագետների [ծրագիրը](#) կարճաժամկետ մասնագիտական վերապատրաստման փոխանակման ծրագիր է ԱՄՆ-ում, որը հնարավորություն է ընձեռնում խոստումնալից երիտասարդ մասնագետներին ծանոթանալու և գործնական փորձ ձեռք բերելու ԱՄՆ-ի կառավարական մարմիններում: PFP-ն ներգրավում է մասնագետների, ովքեր աշխատելով պետական մարմիններում, քաղաքացիական կրթության հաստատություններում, քաղաքացիների շահերի պաշտպանության միություններում, ընտրական գործընթացը վերահսկող կազմակերպություններում կամ ՀԿ-ներում՝ ակտիվ ընգրկված են օրենսդրական և/կամ քաղաքականության մշակման գործընթացում: Ծրագրի մեկնարկից՝ 2012թ-ից ի վեր, PFP մրցույթին Հայաստանից մասնակցել է 671 դիմորդ, որոնցից 30-ն ընտրվել և մեկնել են վերապատրաստվելու ԱՄՆ-ի 11 նահանգներում: PFP ծրագրի շրջանավարտները վերադառնալուց հետո իրենց ամերիկյան գործընկերների հետ համատեղ Հայաստանում իրականացրել են 19 մասնագիտական նախագծեր:

Ապագա առաջնորդների փոխանակման ծրագիր /FLEX/

Այս [ծրագիրը](#) 9-12-րդ դասարանի աշակերտներին տրամադրում է կրթաթոշակ՝ հնարավորություն տալով մեկ ուսումնական տարի անցկացնել ԱՄՆ-ում՝ ապրելով ամերիկյան հյուրընկալող ընտանիքում և հաճախելով ամերիկյան դպրոց: 1993թ.-ից ի վեր մրցութային կարգով ընտրված ավելի քան 950 հայ աշակերտներ վերադարձել են Հայաստան՝ ունենալով ոչ միայն ամերիկյան մշակույթի, դեմոկրատական արժեքների մասին խոր գիտելիքներ և կամավորական աշխատանքների փորձ, այլև դրանք օգտագործելու մեծ ցանկություն՝ մյուսներին օգնելու համար:

EducationUSA

ԱՄՆ պետքարտուղարության կողմից հովանավորվող [EducationUSA](#) հայաստանյան գրասենյակը պատկանում է աշխարհում գոյություն ունեցող հարյուրավոր խորհրդատվական կենտրոնների ցանցին: Կենտրոնը դիմորդներին և ուսանողներին տրամադրում է ճշգրիտ, բազմակողմանի և արդի տեղեկատվություն՝ ԱՄՆ-ում թղթեղներ և համալսարաններ ընդունվելու գործընթացի վերաբերյալ: Կենտրոնի բոլոր ծառայությունները՝ ներառյալ թեստերին պատրաստվելու համար գրադարանից գրքեր տրամադրելը, անհատական խորհրդատվությունները, դասախոսությունները, աշխատաժողովները, փորձնական թեստերի հանձնումը, խմբակային խորհրդատվությունները և տարածաշրջանային այցելությունները տրամադրվում են անվճար:


Կազմակերպության մասին

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԻՏՁՄ) նախաձեռնել և իրականացնում է Հայաստանի կրթական համակարգում ինժեներական լաբորատորիաների հիմնման ծրագիր, որի նպատակն է ուժեղացնել Հայաստանում տեխնիկական կրթության բազան, նպաստել դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանը, պատրաստել տեխնիկական կրթությամբ մասնագիտական աշխատուժ, որը կբավարարի աճող պահանջարկը: Ինժեներական լաբորատորիաները հնարավորություն կտան Հայաստանի շուրջ 1400 դպրոցներում գործարկել ինժեներական խմբակներ՝ արտադասարանային զբաղվածության ձևաչափով:

Ինժեներական խմբակների ուսումնական ծրագիրը ենթադրում է, որ խմբակների շրջանավարտները (առանց բուհ ավարտելու) զինված կլինեն բավականաչափ տեխնիկական գիտելիքներով՝ աշխատուժի շուկա որպես սկզբնական մակարդակի տեխնիկական մասնագետներ մուտք գործելու համար: Սա որակապես նոր՝ միջին մասնագիտական հմտություններով սեզմենտ կստեղծի Հայաստանի տեխնոլոգիական աշխատուժի շուկայում:

Հնարավորություններ

Ռոբոտաշինության և ինժեներական լաբորատորիա-խմբակների թիվը 2018թ.-ի հուլիս ամսվա դրությամբ հասնում է 226-ի, իսկ նրանցում ներգրավված 5250 երեխաներն ունեն ծրագրավորման, ռոբոտաշինության և եռաչափ մոդելավորման գիտելիքներ և հմտություններ ստանալու անվճար հնարավորություն: Խմբակներում ներգրավվելու համար անհրաժեշտ է դիմել առցանց եղանակով:



Կազմակերպության մասին

«Բի Էս Սի»-ն Հայաստանում առաջին բիզնես խորհրդատվական և թրեյնինգային ընկերությունն է, որը հիմնադրվել է 1994 թվականին: Գործունեության հիմնական ուղղություններն են կառավարման խորհրդատվություն, մասնագիտական զարգացում, հետազոտություն ու գնահատում, ինչպես նաև զարգացման ծրագրերի իրականացում:

Հնարավորություններ

Quick Start (Արագ մեկնարկ) նախագիծ


Quick Start-ը նախատեսված է այն երիտասարդների համար, ովքեր աշխատանք են փնտրում, ցանկանում են վերապատրաստվել կամ նեղ մասնագիտացում ստանալ: Նախագիծը կապող օղակ է հանդիսանում աշխատաշուկայի և գործատուների միջև:

Մի կողմից՝ նախագծի շրջանակում մասնակիցները ստանում են գործնական գիտելիքներ և հմտություններ, որոնք կօգնեն նրանց մտնել աշխատաշուկա, մյուս կողմից՝ նախագիծն ունի գործընկեր գործատուների աճող ցանկ, որոնց կողմից դիտարկվում են նախագծի լավագույն մասնակիցների թեկնածությունը՝ աշխատակազմի համալրման տեսանկյունից:

Quick Start-ը գրանցել է մի շարք հաջողության պատմություններ, երբ երիտասարդները գտել են իրենց ցանկալի աշխատանքը ծրագրի ավարտից հետո: Նախագծի շրջանակում կազմակերպվում են տարբեր մասնագիտական ուղղություններով ծրագրեր, որոնք ներառում են դասընթացների շարք, թեստավորում, վարպետության դասեր, գործնական այցելություն տարբեր ընկերություններ և այլն:

Մասնագիտական ուղղություններն են (ցանկն անընդհատ ընդլայնվում է)՝

- SS նախագծերի կառավարչի (IT Project Manager) [պատրաստում](#)
- Թվային մարքեթինգի մասնագետի [պատրաստում](#)
- Սոցիալական մեդիայի մարքեթինգի (SMM) մասնագետի [պատրաստում](#)
- Միջոցառումների կառավարման մասնագետի [պատրաստում](#)
- Ֆինանսական վերլուծաբանի [պատրաստում](#)
- PR մասնագետի [պատրաստում](#)
- Մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետի [պատրաստում](#)
- QA (Որակի Ապահովման) մասնագետի [պատրաստում](#)



Կազմակերպության մասին

Գյումրու [«Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»](#) հասարակական կազմակերպությունը (ԵՆԿ) երիտասարդական աշխատանքի բնագավառում փորձ ունեցող և այդ ոլորտում ճանաչված մի խումբ երիտասարդների կողմից հիմնադրված հասարակական կազմակերպություն է: Այն հիմնադրվել է 2008թ. դեկտեմբերին:

Կազմակերպությունը նպատակ ունի աջակցել երիտասարդների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ու նրանց հանրային դերի բարձրացմանը, խթանել նրանց նախաձեռնողականությունը:

Հնարավորություններ

Erasmus+ Youth. Տեղեկատվական կենտրոն

2017թ-ից գործող [կենտրոնի](#) նպատակն է տրամադրել տեղեկատվություն երիտասարդներին ու երիտասարդական կազմակերպություններին ընձեռնվող հնարավորությունների մասին «Էրազմուս+ Երիտասարդություն» ծրագրի շրջանակներում:

«Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն

Գյումրիում գործող [«Երիտասարդների տունը»](#) 13-ից 18 տարեկան երիտասարդներին առաջարկում է երիտասարդական ծառայությունների լայն շրջանակ՝ ներառյալ կյանքի հմտությունների և աշխատանքային մրցունակության կարողությունների զարգացում, անհատական կամ խմբային խորհրդատվություն և այլն:

Այլ հնարավորություններ

ԵՆԿ-ն երիտասարդներին հրավիրում է նաև անդամակցել լեզվի ակումբներին, մասնակցել կենտրոնի կազմակերպած արշավներին, օգտվել Եվրամիության «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում ընձեռնվող միջազգային և կամավորական տարբեր ծրագրերի մասնակցելու հնարավորությունից:



Կազմակերպության մասին

«Դասավանդի՛ր, Հայաստան» (Teach For Armenia) կրթական հիմնադրամն անդամակցում է «Կրթություն բոլորի համար» (Teach For All) միջազգային ցանցին, որի անդամ է ևս 48 երկիր: Կազմակերպությունն իրականացնում է առաջնորդության զարգացման երկամյա ծրագիր Հայաստանի լավագույն երիտասարդ մասնագետների համար: Այն միտված է բացահայտելու մասնակիցների մասնագիտական և առաջնորդական ներուժը՝ միաժամանակ նպաստելով գյուղական համայնքների զարգացմանը:

Ծրագրի երկարաժամկետ տեսլականն է ձևավորել համախոհ առաջնորդներ, ովքեր հասկանում են հայկական կրթական համակարգի առանձնահատկությունները և ի վիճակի են ծրագիրը հաջողությամբ ավարտելուց հետո նպաստել նաև դրա հետագա զարգացմանը և արդիականացմանը՝ անկախ իրենց կարիերայի ընթացքից:

Հնարավորություններ

Ծրագիրը մասնակիցներին առաջարկում է՝

- Մասնագիտական աճ
- Վերապատրաստում և մանկավարժի որակավորում
- Դրամական աջակցություն
- Առաջնորդության հմտությունների զարգացման հնարավորություն
- Կարիերայի զարգացման հնարավորություններ
- Նորարար մտքեր և նախագծեր իրականացնելու հարթակ

Ծրագրի մասնակիցները տեղաբաշխվում են Հայաստանի մարզերի այն դպրոցներում, որտեղ կա համապատասխան երիտասարդ մասնագետների պակաս:

Ծրագրին ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ՝ անցնելով այս [հղմամբ](#), իսկ մասնակցության համար հայտադիմումները հասանելի կլինեն կայքում հունվարի 9-ից:





Կազմակերպության մասին

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին: Կազմակերպության նպատակն է օժանդակել Հայաստանի Հանրապետության կայացմանը որպես ժողովրդավարական պետություն՝ հիմնված իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վրա: Կազմակերպության առաքելությունն է նպաստել Հայաստանում նոր մտածելակերպի, մասնագիտական բարձր կարողությունների և բարոյական նկարագրի տեր կիրթ իրավաբանների սերնդի ձևավորմանը, հասարակությունում բարձր իրավական մշակույթի արմատավորմանը և իրավունքի գերակայության հաստատմանը: ԻՀԱ-ն հանդիսանում է ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական Խորհրդի հատուկ խորհրդակցական անդամ և ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիայի անդամ: ԻՀԱ-ի կենտրոնական գրասենյակը Երևանում է, իսկ մասնաճյուղերը՝ Վանաձորում, Գավառում, Գյումրիում և Կապանում:

2012թ. ԻՀԱ-ն գործարկեց Iravaban.net լրատվական կայքը՝ ուղղված հասարակության իրավագիտակցության բարձրացմանը, ժամանակակից իրավական մշակույթի ձևավորմանը, իրավաբանների մասնագիտական հմտությունների բարելավմանը:

2014թ.-ին «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում հիմնադրվեց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան, որն այժմ բաղկացած է 96 ՔՀԿ-ից:

Հնարավորություններ

Իրավաբանների հայկական ասոցիացիան առաջարկում է անվճար երկամսյա պրակտիկա երիտասարդ իրավաբանների, թարգմանիչների, լրագրողների և փորձագետների համար: Պրակտիկանտները կարող են լինել նաև ուսանողներ: Մեր նախորդ տեղական կամավորների մասին տեղեկատվություն կարող եք ստանալ այստեղ:



Կազմակերպության մասին

ԱՄՆ Խաղաղության կորպուսը ստեղծվել է 1961 թվականին Ջոն Գ. Բենեդիկտի կողմից՝ աշխարհում խաղաղություն և ընկերություն ամրապնդելու նպատակով: ԱՄՆ Խաղաղության կորպուսը Հայաստանում գործում է 1992թ.-ից: Այդ ժամանակից ի վեր ավելի քան 1,000 ամերիկացի կամավոր է ծառայել Հայաստանի մարզերում: Կամավորներն իրենց գործունեությունն իրականացնում են հանրակրթական դպրոցներում և հասարակական կազմակերպություններում երկու ծրագրերի շուրջ՝ «Անգլերենը՝ որպես օտար լեզու» և «Համայնքի և երիտասարդության զարգացում»: Կամավորները Հայաստանում ապրում և աշխատում են 27 ամիս, սովորում են հայերեն, ծանոթանում հայ մշակույթին և իրականացնում տարբեր մրցույթներ և ճամբարներ:

Հնարավորություններ

Girls Leading Our World (GLOW) Armenia

Հայաստանյան «Աշխարհն առաջնորդող կանայք» (GLOW) ծրագիրը ձգտում է հզորացնել աղջիկներին և կրթության միջոցով խթանել առաջնորդությունը հզոր կանանց համայնքի ներսում: Այժմ GLOW Հայաստանը համագործակցում է «Գյումրու երիտասարդական նախաձեռնություններ» (YIC) ՀԿ և «ԿԱԶԱ» - Կոմիտաս Շվեյցարիա - Հայաստան Բարեգործական հիմնադրամի (KASA) հետ:

Teaching Our Boys Excellence (TOBE)

«Տղաների անձնային որակների կատարելագործման ճամբարը» երիտասարդական նախաձեռնություն է՝ ուղղված Հայաստանի երիտասարդ տղաների զարգացմանը: «Երիտասարդներ հանուն ապագայի» ՀԿ-ի և Խաղաղության կորպուսի կամավորների համատեղ ջանքերով մեկշաբաթյա ճամբարի ընթացքում տասնյակ տղաներ Հայաստանի բոլոր շրջաններից անցնում են առաջնորդության, առողջ ապրելակերպի դասընթացներ:

Growing and Renewing Our World (GROW)

Growing and Renewing Our World (GROW) բնապահպանական ճամբար - GROW բնապահպանական ճամբարի նպատակն է սովորեցնել հայ երիտասարդներին շրջակա միջավայրի կարևորության, միջավայրը խնամելու հմտությունների մասին:

Border to Border (B2B)

«Սահմանից Սահման» նախաձեռնության շրջանակներում ամեն ամառ կամավորների խմբերը շրջում են երկրով մեկ՝ ճանապարհին կանգ առնելով հանրապետության դպրոցներում և երիտասարդական կազմակերպություններում, անցկացնելու անձնական, սոցիալական և համայնքային առողջության վերաբերյալ դասընթացներ:

National Poetry Recitation Contest (NPR)

Պոեզիայի և ասմունքի ազգային մրցույթը հնարավորություն է տալիս հայ աշակերտներին խորացնելու իրենց անգլերենի իմացությունը և ձեռք բերելու հանրային խոսքի հմտություններ՝ Արևմտյան բանաստեղծների գործերին ծանոթանալու միջոցով:

Write on!

«Write on!»-ը անգլերեն լեզվով գրված շարադրությունների միջազգային մրցույթ է, որը Հայաստանում կազմակերպվում է փետրվար-մարտ ամիսներին: Հաղթող մասնակիցների աշխատանքները հրապարակվում են առցանց, և վերջիններս ստանում են հավաստագրեր:

«ԿԱԶԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ



Կազմակերպության մասին

Գործունեության ավելի քան 20 տարիների ընթացքում «ԿԱԶԱ» հիմնադրամը ծրագրեր է իրականացնում 5 հիմնական ոլորտներում (մարդասիրական, շինարարական, կրթական, գյուղատնտեսական, զբոսաշրջային)՝ նպատակ ունենալով նպաստել Հայաստանի կայուն զարգացմանը: Հիմնադրամի սկզբնական ծրագրերի զգալի մասն աղետի գոտում է ծավալվել, մասնավորապես Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերում:

«ԿԱԶԱ» հիմնադրամը [Գյումրի](#) և [Երևան](#) քաղաքներում հիմնել է կրթամշակութային և սոցիալական զարգացման երկու կենտրոն, որտեղ մի շարք ծրագրեր են իրականացվում ինչպես մանուկների, երիտասարդների, այնպես էլ մեծահասակների համար:

Հնարավորություններ

«Հայաստանի երիտասարդ քաղաքացիներ» ծրագիր

Ծրագրի մասնակիցները սովորում են ավելի լավ ճանաչել այն միջավայրը, որում ապրում են, միասին զարգացնել իրենց ստեղծարար միտքը և նախագծեր կյանքի կոչել իրենց երկրում: Երիտասարդների հետ աշխատանքը տարվում է տարատեսակ ակումբների (անգլերենի, ֆրանսերենի, մարդու իրավունքների և այլն) ձևաչափով, որոնք կազմակերպվում են ակումբավարների ակտիվ մասնակցությամբ: Ծրագրին կարելի է մասնակցել որպես կամավոր-ակումբավար, կամ որպես ակումբների մասնակից:

Փախստականների և ապաստան հայցող անձանց ինտեգրացիային ուղղված ծրագրեր

Այս ծրագրերի նպատակն է աջակցել Հայաստան ժամանած տեղահանված ընտանիքների աստիճանական ինտեգրմանը տեղական իրականությանը: Ծրագրերին կարելի է մասնակցել որպես կամավոր՝ աշխատելով տեղահանված ընտանիքների հետ:

«Երկուսով աշխատանքի համար»

Սա մենթորական ծրագիր է, որի ընթացքում աշխատաշուկայում փորձառու երիտասարդները մենթորություն են անում աշխատանք փնտրող երիտասարդներին՝ աջակցելով և հեշտացնելով փնտրտուքները: Մասնակիցների համար կազմակերպվում են աշխատանքային հմտությունների զարգացմանն ուղղված թեմատիկ հանդիպումներ: Ծրագրին կարելի է մասնակցել և՛ որպես կամավոր-մենթոր, և՛ որպես մասնակից:

«Զբոսավարների պատրաստում» դասընթաց

Դասընթացը ներառում է տեսական մաս, աշխատանք հեռավար ուսուցման հարթակում, լսարանային հանդիպումներ և այցեր դեպի պատմամշակութային վայրեր: Դասընթացի յուրաքանչյուր մասնակցի աշխատանքին մշտապես հետևում է մեկ մասնագետ մենթոր:

«Եվրոպական կամավորական ծառայություն» ծրագիր

Ծրագիրը եզակի հնարավորություն է տալիս 17-30 տարեկան երիտասարդներին Եվրոպայում կամավորություն անելու, ծանոթանալու տարբեր մշակույթների հետ, զարգացնելու նոր հմտություններ՝ միաժամանակ օգնելով ուրիշներին դառնալու ավելի ինքնավստահ և ինքնուրույն, բարելավելու լեզվական հմտությունները և այլն:



Կազմակերպության մասին

«Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա» ընկերությունը աշխարհում ոչ ալկոհոլային զովագուցիչ ըմպելիքներ արտադրող խոշորագույն ընկերություններից մեկի՝ հայտնի «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի» ընկերության մասնաճյուղն է: Հայաստանում այն գործունեություն է ծավալում 1996 թ-ից:

Ավելի քան 20-ամյա գործունեության ընթացքում կատարած ներդրումների և իրականացրած նախագծերի միջոցով ընկերությունը նպաստել է երկրի տնտեսության զարգացմանը: Ավելի քան 350 մասնագետից բաղկացած փորձառու թիմն ուղղակիորեն ներգրավված է ընկերության ամենօրյա գործունեությունում, իսկ 12 000-ից ավելի կորպորատիվ հաճախորդներն օգնում են արտադրանքն արագ հասցնել սպառողին:

Հնարավորություններ

«RISE Management Trainee» ծրագիր

Ամենամյա աշխատանքային այս ծրագիրը միտված է տաղանդավոր շրջանավարտներին օգնելու սկսել իրենց աշխատանքային կարիերան, բացահայտել մասնագիտական ներուժն ու համալրել նոր սերնդի առաջնորդների շարքերը: Լրիվ դրույքաչափով աշխատանք ապահովող այս երկամյա նախագծին կարող են դիմել աշխատանքային փորձ չունեցող կամ մինչև երկու տարի աշխատանքային փորձով, անգլերեն լեզվին վարժ տիրապետող, սովորելու հակում ունեցող և արտերկրում աշխատելուն պատրաստ ավարտական կուրսի ուսանողներ, ինչպես նաև շրջանավարտներ և մագիստրատուրայի կրթական ծրագրերի մասնակիցներ:

«Երիտասարդների զարգացում» նախագիծ

2018-ին «Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա» ընկերությունը մեկնարկել է «Երիտասարդների զարգացում» եռամյա նախագիծը: ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակում իրականացվող ծրագիրն ուղղված է երիտասարդության շրջանում գործազրկության նվազեցմանը: Մինչև 2020-ը նախատեսվում է կյանքի և բիզնես հմտությունների դասընթացներով աջակցել 8000 երիտասարդի:

«Երիտասարդների զարգացում» ծրագրի առաջին փուլում մասնակիցները փորձառու մենթորների օգնությամբ ձեռք են բերում ինքնագարգացման և ինքնագնահատման հմտություններ, այդ թվում՝ մասնագիտական կապերի ստեղծման, հետադարձ կապի, ուղեկցող նամակ և CV գրելու, գործատուին ներկայանալու հմտություններ: Ծրագրի երկրորդ փուլում մասնակիցները կսովորեն բիզնես հմտություններ՝ ժամանակի և նախագծերի կառավարման, հաղորդակցական, բանակցային և վաճառքի հմտություններ, բիզնես պլանավորում, ինչպես նաև ֆինանսական գրագիտություն: Բացի Երևանից, դասընթացներն անցկացվում են նաև Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի և Սյունիքի մարզերում:

Մասնակիցները և մենթորները կարող են միանալ ծրագրին՝ առցանց լրացնելով համապատասխանաբար [մասնակիցների](#) և [մենթորների](#) համար նախատեսված էլեկտրոնային հայտերը:

«Երիտասարդների զարգացում» ծրագրին գրանցումը, դասընթացների համակարգումը, ինչպես նաև կազմակերպչական բոլոր աշխատանքներն իրականացնում և համակարգում է «ԱՅ ԷՅ ԲԲ» Միջազգային Բիզնես Ակադեմիան:



Կազմակերպության մասին

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն Հայաստանի Հանրապետությունում գործող համայնքային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2009 թ. Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի տարբեր համայնքներ ներկայացնող ոչ ֆորմալ քաղաքացիական խմբերի կողմից: Ներկա պահին կազմակերպությունը աշխատում է ՀՀ 8 մարզերում:

Կազմակերպության հիմնական գործունեության ոլորտներն ու ուղղություններից են մարդու իրավունքների պաշտպանությունը, երեխաների իրավունքների պաշտպանությունը, համայնքային զարգացումը, ֆորմալ ու ոչ ֆորմալ կրթությունը և այլն:

Հնարավորություններ

Կազմակերպությունը զբաղվում է Եվրոպական Կամավորական Ծառայության (EVS) ծրագրի շրջանակներում կամավորների [հյուրընկալմամբ](#) և հանդիսանում է ուղարկող կազմակերպություն, ինչպես նաև հնարավորություն է ընձեռնում երիտասարդությանը ներգրավված լինել՝ ոչ ֆորմալ կրթության ոլորտում իրականացնելով տարբեր դասընթացներ և միջոցառումներ:



Կազմակերպության մասին

Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների ավելի քան 75,000 բնակիչները:

Հնարավորություններ

Կրթաթոշակի ծրագիր

Կրթաթոշակը նախատեսված է Հիմնադրամի Արագածոտնի, Արմավիրի, Լոռու և Տավուշի մարզերի ՔՈԱՖ-ի շահառու համայնքներից Հայաստանի բուհերում սովորող ուսանողների համար: Այն սահմանվել է 2014թ. և տրամադրվում է «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի» և ՔՈԱՖ-ի կողմից՝ համատեղ: Ուսանողների ընտրությունը կատարում է Հիմնադրամը՝ երկփուլ գործընթացի արդյունքում: Որպես կրթաթոշակի շարունակականության պայման՝ կրթաթոշակառուները պետք է գիտելիքը ծառայեցնեն իրենց համայնքներին՝ իրականացնելով գյուղի զարգացմանն ուղղված մասնագիտական, համայնքափոխ ծրագրեր: Կրթաթոշակը տրամադրվում է մեկ կիսամյակի համար, իսկ շարունակականությունը որոշվելու է ուսանողի կրթական առաջադիմությամբ և իրականացված համայնքային ծրագրով: 2014թ. ի վեր 69 ուսանողի տրամադրվել է կրթաթոշակ:

ՔՈԱՖ ՄՄԱՐԹ Նախաձեռնություն

2015թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՄՄԱՐԹ նախաձեռնություն: ՄՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՄՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՄՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբեդ գյուղի մոտակայքում: Կենտրոնի ուսումնական ծրագիրը շեշտը դնում է ուսուցման նոր մեթոդների վրա՝ օգտվելով և՛ նախագծային ուսուցման, և՛ գործնական ուսուցման հնարավորություններից: ՄՄԱՐԹ-ի առաջարկված ծրագրերը բոլորի համար են՝ սկսած 3 տարեկանից: Կենտրոնը հնարավորություն ունի ամեն օր ընդունելու շուրջ 250 մարդու՝ ծառայելով մարզի 57 համայնքների 150,000 բնակիչներին:

Առաջարկված ծրագրերն առնչվում են և՛ կրթությանը, և՛ տնտեսական զարգացմանը՝ ներառելով այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը, սպորտը, առողջապահությունը, երեխայի զարգացումն ու մեղիան: Ամենօրյա դասընթացները վերաբերում են գիտությանը, բլոկչեյնին, ռոբոտիկային, ծրագրավորմանն ու կոդավորմանը, լեզուներին, թատրոնին, երաժշտությանն ու պարին, գյուղատնտեսությանը, արվեստին, վեբ դիզայնին ու գրաֆիկական դիզայնին, հավելվածների մշակմանը:

#EU4Youth
#UP4Change



Կազմակերպության մասին


Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի գործունեության նպատակն է աջակցել Էրազմուս+ ծրագրի խթանմանն ու տարածմանը Հայաստանում՝ բարելավելով վերջինիս միջազգային բաղադրիչների մասին հանրային իրազեկությունը:


Հնարավորություններ

Էրազմուս+-ը ԵՄ ծրագիր է, որը ֆինանսավորում է հետևյալ հիմնական գործողությունները իրականացումը՝

- **Անհատների ուսումնական շարժունություն՝** [Միջազգային կրեդիտային շարժունություն և Էրազմուս Մոնդուս համատեղ մագիստրոսական ծրագրեր](#)
Միջազգային կրեդիտային շարժունությունը հնարավորություն է տալիս ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ, ինչպես նաև հայաստանյան բուհերի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ուսանելու և (կամ) մասնագիտական փորձ ձեռք բերելու Եվրոպական որևէ երկրում՝ ստանալով համապատասխան կրթաթոշակ կամ դրամաշնորհ: Դիմելով **Էրազմուս Մոնդուս միջազգային ծրագրերին**, դիմորդները կարող են ամբողջական կրթաթոշակ ստանալ և ներգրավվել Եվրամիության կողմից ֆինանսավորվող համատեղ մագիստրոսական ծրագրերի մեջ:
- **Նորարարությանը միտված համագործակցություն և լավագույն փորձի փոխանակում՝** [Բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացման ծրագրեր](#)
Բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացման ծրագրերի միջոցով հայաստանյան բուհերը կարող են դիմել դրամաշնորհի՝ նպատակ ունենալով վերանայել իրենց առարկայական ծրագրերը, արդիականացնել բուհական կառավարման համակարգերը և ամրապնդել բուհ-հասարակություն կապը:
- [Ժան Մոնե գործողություններն](#) ուղղված են խթանելու դասավանդումն ու հետազոտությունները ԵՄ և Եվրոպական ինտեգրման ուսումնասիրությունների ոլորտներում:

Էրազմուս+ ծրագրի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել՝ այցելելով [ծրագրի կայք](#):





ՀՀ Կենտրոնական
Բանկ

Նախագծի մասին

[ABC Finance թիմը](#) հիմնվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Նախագծի հիմնական նպատակն է օգնել յուրաքանչյուրին՝ ստանալու պարզ, անաչառ և վստահելի տեղեկատվություն անձնական ֆինանսների վերաբերյալ, լինելու իրազեկ ֆինանսական ոլորտում և պաշտպանելու սեփական իրավունքները:

Նախագծի սկզբունքներն են՝

- **Անկողմնակալություն.** թիմն անվճար տրամադրում է կրթական, ուսուցողական և ինֆորմացիոն բնույթի անկախ տեղեկատվություն, որը չի արտացոլում այլ անձանց կամ կազմակերպությունների շահերը:
- **Ներգրավվածություն.** թիմն ապահովում է հանրության համընդհանուր ներգրավվածությունը՝ տրամադրելով բոլորին հասանելի տեղեկատվություն, դրսևորելով անհատական մոտեցում և տալով հնարավորություն յուրաքանչյուրին կայքում ստեղծել անհատական էջ:
- **Ինտերակտիվություն.** թիմը ստեղծել է ժամանակակից միտումներին համապատասխան դինամիկ կայք, որտեղ յուրաքանչյուրը կարող է հեշտությամբ գտնել ինչպես իրեն պիտանի նյութեր, այնպես էլ օգտվել ֆինանսական տարբեր հաշվիչներից, գործիքներից և խաղերից:

Հնարավորություններ

ABC Finance թիմը իրականացնում է ֆինանսական կրթմանն ուղղված մի շարք տարբեր թիրախային խմբերի համար. կանայք, երիտասարդներ, աշակերտներ, գյուղական համայնքների բնակիչներ և այլն: Նախագծի պարբերական ծրագրերից են՝ «Իմ ֆինանսների ամիս», «Փողի միջազգային շաբաթ», «Խնայողությունների միջազգային օր», ֆինանսական տարբեր թեմաներով դեբատներ և սեմինարներ, «Ֆինանսական Բրեյն-Ռինգ դպրոցական աշակերտների համար» և այլն:

ABC Finance թիմը իրականացնում է ֆինանսական կրթմանն ուղղված մի շարք ծրագրեր նաև առցանց Գործում է www.abcfinance.am տեղեկատվական կայքը, որտեղ յուրաքանչյուր անձ կարող է գտնել իր համար օգտակար նյութեր, ստանալ իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները ֆինանսական տարբեր թեմաների շուրջ, կատարել հաշվարկներ վարկային, ավանդային, կենսաթոշակային և աշխատավարձի հաշվիչների միջոցով, ծանոթանալ իրականացվող միջոցառումներին ու նորություններին և այլն:

www.fininfo.am հարթակում կարելի է որոնել և արագ համեմատել վարկերի, ավանդների, քարտերի, դրամական փոխանցումների շուկայում գործող առաջարկները:

Կազմակերպության մասին

Երիտասարդ հասակակից ուսուցանողների (Y-PEER) ցանցը ստեղծվել է Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում՝ երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի համաճարակի տարածմանը հակազդելու համար: Y-PEER-ի հիմնադրումը նպատակ ունի օգնելու երիտասարդներին ճշգրիտ տեղեկություններ ստանալ վերարտադրողական առողջության վերաբերյալ: Ցանցը սկսել է գործել 2002թ. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի նախաձեռնությամբ:


Հայաստանում Y-PEER ցանցը գործում է 2004թ.-ից: Իր գործունեության ընթացքում Y-PEER ցանցն իրականացրել է վերարտադրողական առողջությանն ու իրավունքներին նվիրված դասընթացներ, ծրագրեր և հանրային միջոցառումներ Հայաստանի գրեթե բոլոր մարզերում:

Y-PEER հասակակից ուսուցանողների ցանցը կազմված է տարբեր երկրների երիտասարդներից, հասարակական կազմակերպություններից և պետական մարմիններից:

Y-PEER ցանցը նպատակ ունի առողջ ապրելակերպի ու վերարտադրողական առողջության վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ տրամադրել և հմտություններ ձևավորել, որպեսզի երիտասարդները հետագայում կարողանան առողջ ընտրություն կատարել: Y-PEER ցանցը ոչ միայն իրազեկում է երիտասարդներին, այլև ձևավորում է այնպիսի կարևոր հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցվելու և տեղեկություններ փոխանցելու ու այլ հմտությունները, ինչպես նաև տալիս է առաջնորդության հմտությունները զարգացնելու և դրանք սեփական համայնքներում կիրառելու հնարավորություն: Y-PEER ցանցն աշխատում է ինտերակտիվ դասընթացների միջոցով՝ հասակակիցների մեջ ձևավորելով պատասխանատու վարքագիծ, որը կմղի պատասխանատու որոշումների կայացման և հետագայում նրանց ընտանիքներում և համայնքում կհանգեցնի հասարակական փոփոխությունների: Ցանցի նպատակներից է նաև «Կայուն զարգացման 2030 օրակարգի» մասին իրազեկումը: Ցանցն իրականացնում է դասընթացներ, այցելություններ դեպի Հայաստանի տարբեր մարզեր և Կայուն զարգացման նպատակների մասին իրազեկության բարձրացման հանդիպումներ և միջոցառումներ: Այս ամենը իրականացվում է ոչ ֆորմալ և ստեղծագործական միջավայրում, քանի որ ցանցի անդամներն օգնում են ոչ միայն կրթվել, այլև մեծ ուշադրություն են հատկացնում ինքնազարգացմանը:

Հնարավորություններ

Առկա են ցանցին անդամակցելու, ինչպես նաև նրա միջոցով ուսուցանող դառնալու և առաջնորդության հմտություններ զարգացնելու հնարավորություններ: Ցանցին կարող է միանալ 16-28 տարեկան յուրաքանչյուր անձ: Տարեկան 2 անգամ ֆեյսբուքյան էջով տարածվում է ցանցին միանալու բաց հրավեր:





Կազմակերպության մասին


«ՅՈՒՆԻԳՐՈՈՒՖ Զարգացման Կենտրոն»-ն իր հիմնադրման օրվանից նպաստում է երիտասարդների ակտիվ մասնակցությանը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակներում: Այն հնարավորություն է ընձեռում մասնակցելու տարբեր հասարակական նախաձեռնությունների, փորձի փոխանակման ծրագրերի և բացահայտելու սեփական հնարավորությունները տարբեր ծրագրերի միջոցով:

Կենտրոնն իրագործում է Էրազմուս+ նախագծեր 2016 թ. ի վեր՝ խթանելով եվրոպական գործընկերների հետ միջազգային կապերը:

Կազմակերպությունը Հայաստանում նախաձեռնում է տարատեսակ դասընթացներ, երիտասարդական փոխանակման ծրագրեր և այլ միջոցառումներ երիտասարդների և/կամ երիտասարդական աշխատողների համար: Իր գործընկեր կազմակերպությունների լայն ցանցի շնորհիվ այն նաև հնարավորություն է ընձեռում երիտասարդներին/երիտասարդական աշխատողներին մասնակցելու եվրոպական տարբեր երկրների երիտասարդական փոխանակման, վերապատրաստման դասընթացներին և եվրոպական կամավորական ծրագրին:

Հնարավորություններ

Կենտրոնին միանալու համար անհրաժեշտ է ուղարկել նամակ կազմակերպության [էլ. փոստին](#), որից հետո դիմումատուն պարբերաբար կստանա ծրագրերի մասին բոլոր նորությունները: Եվրոպական կամավորական ծրագրի մասին ավելին իմանալու համար անհրաժեշտ է անդամակցել կազմակերպության [ֆեյսբուքյան խմբին](#):



Կազմակերպության մասին

Ucom-ը Հայաստանում ֆիքսված և շարժական ամենաարագ կապի ծառայություններ մատուցող ընկերությունն է: Հայաստանում IPTV և ֆիքսված ինտերնետի ծառայությունների մատուցման բացարձակ առաջատարն է, ինչպես նաև գլխավոր դիրքն է զբաղեցնում շարժական ինտերնետի հայկական շուկայում: Այդ մասին վկայում է աշխարհում ֆիքսված ու շարժական ինտերնետի արագությունը չափագրող ամենահայտնի Speedtest by Ookla իռլանդական ընկերությունը, որը Ucom-ին շնորհել է «Հայաստանում ամենաարագ շարժական ցանց 2017» մրցանակը:

Հնարավորություններ

Ucom-ը մշտապես առաջարկում է աշխատանքի բազմաթիվ հնարավորություններ, որոնց ամբողջական ցանկը թարմացվում է կազմակերպության կայքի [համապատասխան հատվածում](#): Ucom-ն առավել հաճախ գրանցում է հետևյալ մասնագիտությունների պահանջարկ՝ վաճառքի մասնագետ, ակտիվ վաճառքի գործակալ, տեղեկատվական կենտրոնի մասնագետ, վաճառքի և սպասարկման մասնագետ և այլն:

Ucom ընկերությունը ներդրումներ է կատարել, որպեսզի Հայաստանի մարզերում և Երևանում բացվեն «Արմաթ» անվանումը կրող շուրջ 230 ինժեներական խմբակ-լաբորատորիաներ: «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների կրթական ծրագիրը նպատակ ունի ուժեղացնել Հայաստանում տեխնիկական կրթության բազան, նպաստել դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանը, պատրաստել տեխնիկական կրթությամբ մասնագիտական աշխատուժ, որը կբավարարի աճող պահանջարկը:

Ucom ընկերությունը համագործակցում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ: Համագործակցության շրջանակներում ուսանողները հնարավորություն են ստանում վերապատրաստվել Ucom-ի լաբորատորիայում և անցնել աշխատանքի կազմակերպության տարբեր բաժիններում:





Կազմակերպության մասին

«Ունիսոն» կազմակերպությունը հիմնվել է 2002թ.՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առաքելությամբ: Գործունեության ընթացքում իրականացրել է բազմաթիվ ծրագրեր՝ ուղղված կրթության, զբաղվածության, մշակութային և այլ ոլորտների բարեփոխմանը և հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ստեղծմանը: Այդ նպատակին հասնելու համար կազմակերպությունն իրականացնում է հանրային իրազեկմանն ուղղված միջոցառումներ (ցուցահանդես, կլոր սեղան-քննարկում, ֆլեշմոբ), դասընթացներ, հետազոտություններ, տրամադրում է մի շարք ծառայություններ:


Կազմակերպությանը կից գործում է «Փարոս» կամերային երգչախումբը, որի անդամների մեծ մասն ունի հաշմանդամություն:

Հնարավորություններ

Զբաղվածության կենտրոն

Կազմակերպության զբաղվածության կենտրոնն աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրում է խորհրդատվություն աշխատաշուկա մտնելու վերաբերյալ, կազմակերպում է համակարգչային դասընթացներ, ստեղծում կապ գործատուների հետ, տրամադրում խորհրդատվություն աշխատատեղերի հարմարեցման վերաբերյալ:

Բացի այդ, կազմակերպվում են համակարգչային դասընթացներ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար, տրամադրվում է հոգեբանական աջակցություն՝ անհատական հանդիպումների և աջակցման խմբերի աշխատանքի միջոցով, ինչպես նաև իրավաբանական խորհրդատվություն: Գործում է նաև կերպարվեստի ստուդիա:



Կազմակերպության մասին

Ավելի քան 200 աշխատակից ունեցող SS ոլորտի առաջատար ընկերություններից մեկը՝ [Synergy International Systems](#) ընկերությունը մասնագիտացած է տեղեկատվական և վերլուծական համակարգերի ստեղծման մեջ, որոնք նպաստում են ավելի քան 65 երկրների կառավարությունների և միջազգային կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությանը՝ դարձնելով վերջիններիս արդյունքներն առավել թափանցիկ, իսկ մարդկանց կյանքը՝ առավել բարեկեցիկ:

Հնարավորություններ

Ամառային SS դպրոց

Ընկերությունը մեծ ներդրում ունի նոր մասնագետների պատրաստման գործում: 2005թ. ի վեր տեխնիկական ֆակուլտետների ուսանողների համար կազմակերպվում են անվճար ամառային SS դպրոց, որտեղ ուսանողները ձեռք են բերում պրակտիկ գիտելիքներ փորձառու մասնագետներից:

Ուսանողական շաբաթ

Այս վարպետաց դասընթացների ընթացքում ուսանողները ստանում են կիրառելի գիտելիքներ, հնարավորություն են ունենում ավելի լավ ծանոթանալ ոլորտին, առանձնահատկություններին: Tech-talk-երն անցկացվում են Երևանի և Գյումրիի համալսարանների համապատասխան տեխնիկական ֆակուլտետներում:

Բուհերի հետ համագործակցություն

Կազմակերպությունն օժանդակում է ծրագրավորման ֆակուլտետների ուսումնական ծրագրերի խորհրդատվությամբ և քաջալերում աշխատակիցների դասավանդումը: Այս ծրագիրն էապես նպաստում է բուհ-գործատու հարաբերությունների արդյունավետության բարձրացմանը:

Ամառային դպրոց պատանիների համար

Դպրոցը նախատեսված է 14-16 տարեկան, HTML-ի հիմունքներին տիրապետող պատանիներին UI/UX-ի, HTML5-ի, CSS-ի և Photoshop-ի հիմունքները սովորեցնելու համար: Ուսուցումը, ինչպես մնացած ծրագրերի դեպքում, անվճար հիմունքներով է:

Կարիերայի խորհրդատվություն դպրոցականներին

Աշնանային արձակուրդների ընթացքում դպրոցականների համար անցկացվում են բաց դռների օրեր՝ ծանոթանալու SS ոլորտի նորագույն ուղղություններին և հնարավորություններին:

SS-ի հնարավորությունները ոչ տեխնիկականների համար

Այս ծրագիրը նպատակ ունի բացահայտել ոչ տեխնիկական ուսանողների՝ SS-ում իրենց հնարավորությունները՝ համագործակցելով ԵՊՀ Ռումանագերմանագիտական բանասիրության ֆակուլտետի և Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի հետ:

Կամավորական ծրագրեր

[Ընկերությունը](#) նաև տալիս է հնարավորություն անցնել պրակտիկա և ծավալել կամավորական գործունեություն իր ամենամյա տարբեր միջոցառումների շրջանակներում:

Կազմակերպության մասին

[staff.am](#)-ը դինամիկ զարգացող կարիերայի հարթակ է, որն օգնում է ընկերություններին գտնել համապատասխան աշխատակիցներ, իսկ աշխատանք փնտրողներին՝ ցանկալի աշխատանք: Հարթակը շուկայում սկսեց իր գործունեությունը 2016 թվականի նոյեմբեր ամսին և արդեն հասցրել է գրանցել ուշագրավ արդյունքներ՝ դառնալով կարիերայի ոլորտում առաջատարը:

Գնահատելով երիտասարդների դերը Հայաստանում աշխատաշուկայի զարգացման գործում՝ staff.am-ն իր առաջնահերթություններից է համարում երիտասարդներին առաջարկել ինչպես աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան ոչ ֆորմալ կրթության՝ հիմնականում մասնագիտական և սոֆթ հմտությունների զարգացման հնարավորություններ, այնպես էլ մասնագիտական աճին համապատասխան ուսնակության (internship) և աշխատանքի հնարավորություններ տարբեր ոլորտների առաջատար ընկերություններում:

staff.am-ն առաջարկում է օնլայն CV կառուցելու և Գործատուի կողմից անմիջապես նկատվելու գործիք, ինչպես նաև աշխատանքի դիմումի ընթացքին հետևելու և դիմած աշխատանքների բազան կառավարելու հնարավորություն: Նախընտրելի գործատու և մասնագիտական ոլորտ ունենալու դեպքում staff.am-ի օգտատերերը կարող է ստեղծել նաև համապատասխան ծանուցումներ տվյալ ընկերությունում առկա թափուր աշխատատեղերին ծանոթանալու և կարիերայի վերաբերյալ թարմ նորություններին հետևելու համար:

staff.am կարիերայի հարթակը օգտատերերին տրամադրում է իր ծառայություններն օնլայն և անվճար հիմունքներով:

Հնարավորություններ

Ոչ ֆորմալ կրթություն


staff.am-ի [թրեյնինգների հարթակի](#) միջոցով օգտատերերը կարող է գտնել իր մասնագիտական հետաքրքրություններին համապատասխան դասընթացներ ինչպես միջազգային (Udemy, edX, Coursera), այնպես էլ տեղական կրթական հարթակներում:

Վերապատրաստում և աշխատանք

Հարթակում ներկայացված են [800-ից ավելի](#) միջազգային և տեղական առաջատար ընկերությունների աշխատանքները և ուսնակային ծրագրերը:

Կարիերայի խորհրդատվություն

[StaffBlog](#)-ը կարիերայի ոլորտում մասնագիտական խորհրդատվական հարթակ է, որը միավորել է օգտատերերի կարիերայի զարգացմանը միտված մի շարք նախագծեր՝ StaffTalks, CV-ի կառուցում, աշխատանքի դիմելու կանոններ և այլն:



Կազմակերպության մասին

ՍՕՍ-Մանկական Գյուղեր հայկական բարեգործական հիմնադրամը շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը կոչված է աջակցելու ծնողական խնամքից զուրկ կամ դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին: Կազմակերպությունն իր գործունեությունն սկսել է 1989թ.՝ ի պատասխան 1988թ. դեկտեմբերի ավերիչ երկրաշարժին, և 1990թ. բացել է իր դռներն այն երեխաների համար, որոնք կորցրել էին իրենց ծնողներին:


Հնարավորություններ

«Եվրոպական Միությունը հանուն երիտասարդության՝ զբաղունակություն և կայունություն» ծրագիր

Ծրագրի շրջանակներում 16-35 տարեկան երիտասարդների կտրամադրվի ուսուցողական, տեղեկատվական, մասնագիտական աջակցություն:

Երիտասարդները կվերապատրաստվեն Նեքսթ Էքոնոմի դասընթացի ծրագրով (Կյանքի հմտությունների ուսուցողական ձեռնարկ), կուղղորդվեն կարճաժամկետ դասընթացների՝ ըստ անհրաժեշտության, կստանան մասնագիտական կողմնորոշում և համապատասխան գիտելիքներ սեփական բիզնեսի կառավարման, ֆինանսների պլանավորման ոլորտներում:

Ցանկացողները կարող են դիմել նամակով կազմակերպության էլեկտրոնային փոստին, որից հետո կհրավիրվեն անցնելու նախնական կարիքների գնահատում՝ ծրագրում ընդգրկելու նպատակով:





Կազմակերպության մասին

818 ընկերությունը խորհրդատվական ծառայություններ է տրամադրում մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում սկսած 2008 թ.: Կազմակերպությունը մշակում և ներդնում է կառավարման առանձնահատուկ տեխնոլոգիաներ՝ յուրաքանչյուր ձեռնարկության, կազմակերպության մասնագիտական յուրահատկությանը համապատասխան: Կազմակերպությունը համագործակցում է պետական և մասնավոր ոլորտի կազմակերպությունների հետ՝ առաջարկելով ծառայությունների փաթեթ՝ յուրաքանչյուր հաճախորդի անհատական բիզնես կարիքներին համապատասխան: Մենք կարևորում ենք մարդկային կապիտալը և ձգտում մեծացնել յուրաքանչյուր աշխատակցի անհատական արդյունավետությունը՝ ստեղծելով մրցակցային առավելություն և ընդլայնելով կազմակերպության մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի հնարավորությունները:

Հնարավորություններ

Կազմակերպությունն առաջարկում է հետևյալ հնարավորությունները և ծառայությունները.

- Աշխատակազմի ընտրություն
- Պաշտոնների գնահատում և տարակարգում
- Աշխատակազմի զարգացում
- Մարդկային ռեսուրսների ռազմավարության մշակում
- Մոտիվացիոն համակարգերի մշակում և ներդնում
- Կառավարման համակարգեր՝ ըստ նպատակների
- Փոփոխությունների ներդնում
- Կորպորատիվ մշակույթի ձևավորում և ձևափոխում

Կազմակերպությանը կարող է դիմել յուրաքանչյուր անձ, ով հետաքրքրված է աշխատանքային նոր հնարավորություններով: Հաշվի առնելով դիմորդի մասնագիտական տվյալները և գործընկեր կազմակերպությունների պահանջները՝ նրան տրամադրվում է համապատասխան հաստիքի առաջարկ: 818 ընկերության հետ կապվելու համար անհրաժեշտ է ուղարկել ինքնակենսագրական կազմակերպության [էլ. փոստին](#):

